

ԱՐԳԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՁԵՌՆԱԳՐԵՐԸ.

«Սանահնի վանքի հայ գրչագիրներ» վերնագրի տակ «Լուծայ» հանդէսը հաղորդելով, թէ Սանահնի քսանեօթ ձեռագրերը Վրաստանի և Իմերէթի թեմի «նորընտիր առաջնորդ սրբազան Գարեգին եպիսկոպոսի կարգադրութեամբ ուղարկուել են Վեհափառ Կաթողիկոսին Ս. Էջմիածնի մատենադարանում պահելու համար», յարում է «Այս օրերս թեմիս ս. Առաջնորդի միջոցաւ նոյն նպատակով Ս. Էջմիածին է ուղարկուած հանգ. Արքար Յովհաննիսեանի վերջին կամքի համաձայն՝ վերջինիս 19 (*) հայ գրչագիրներ, որոնց (*) մանրամասն և ընդարձակ ցուցակը կազմել է պրօֆ. Հ. Ֆինկը, որ անցեալները լոյս տեսաւ Լայպցիգի Նուբար Գափամաճեանի հայկական տպարանից» (Լուծայ. 1904. Հ. 5, էջ 219)։

Այս լուրը անճշտութիւններ է պարունակում. եւ քանի որ ձեռագրերն իմ անունով են ուղարկուել և անցեալ տարուանից մինչեւ այսօր, 9 յունիսի 1905 ամի, ինձ մօտ են և ես այսօր միայն կարողացայ Մայր Աթոռի մատենադարանապետի պաշտօնավար Մխիթար վարդապետին յանձնել, ուստի համառօտակի՜ պատմեմ ստուգութիւնը։

Հանդուցեալ Արքար Յովհաննիսեանը մօտ չորս տարի առաջ Ֆ. Ն. Ֆինկի և Նուաստիս առաջարկութեամբ յանձն առաւ շուրջ 25,000 մանէթ ճարել Ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի ցուցակը կազմելու և հրատարակելու համար։ Մեր խօսակցութեանց և ստուերագիծ կազմելու միջոցին նա ասաց «Հայոց բոլոր ձեռագրերի տեղը Ս. Էջմիածինը պիտի լինի, իմ ձեռագրերն էլ այնտեղ կուղարկեմ»։ Այս օրուանից ճիշդ մէկ տարի առաջ 1904 թուի յունիսի սկզբին Տփլիսում գտնուելով, հանգուցեալի այրուն յայտնեցի այս բանը։ Տիկինը ասածիս հաւատալով՝ յանձնեց ինձ, որ հանգուցեալի գրքերից

ջոկեմ եւ սպագրերը Մայր Աթոռի մատենադարանի համար: Տպագրերը ամիսներ առաջ կենտրոնական գրադաճառանոցի միջոցով ստանալով՝ ժամանակին յանձնեցի Մայր Աթոռի մատենադարանապետ Մեսրոպ վարդապետին: Իսկ ձեռագրերը ուղարկուեցան Տփլիսի հայոց առաջնորդարանի միջոցով, իբրեւ ապահով ճանապարհ անկորուստ հասցնելու:

Ինչ որ ուղարկուած ձեռագրերի թիւը 19 չէ, ինչպէս հաղորդում է Լուսնայի լրատուն, այլ 18, իսկ մի հատ էլ տպագիր է: Ուսուցչապետ Ֆրանց Նիկողայոս Ֆինկը չէ կազմել Արգար Յովհաննիսեանի 19 ձեռագրի, այլ միայն 15 ձեռագրի ցուցակը: Ձեռագրերը կարգի բերելով եւ համեմատելով՝ տեսայ, որ իմ ստացած ձեռագրերից պակաս է Ֆինկի կազմած Հ. 13 ձեռագիրը:

Այս հանգամանքից արդէն պարզ երևում է, որ Արգար Յովհաննիսեանի ձեռագրերը այժմ պակաս են: Երկար ժամանակ հանգուցեալին մօտ լինելով եւ իբրեւ Արձագանքի աշխատակից խմբագրատանն ապրած, ես առիթ էի ունեցել նորա ձեռագրերը տնտղելու, եւ հաստատ գիտէի, որ նա 18-ից աւելի ձեռագիր ունէր: Օրքան յիշում եմ 26 հատ: Սակայն հանգուցեալի այրու եւ իմ ջանքերն ի զուր անցան նորա գրքերի մէջ ուրիշ ձեռագրերի գտնելու:

Այժմեան ձեռագրերն անցեալ 1904 թուականի նոյեմբերին ստանալուց յետոյ՝ Մայր Աթոռիս մատենադարանապետ Մեսրոպ վարդապետից իմացայ, որ «Արձագանք»ի աշխատակից եւ Լազարեան ձեմարանի ուսուցիչ պ. Խաչատուր Քիւչիւկ-Յովհաննիսեանի մօտ, ինչպէս սա ինքն էր յայտնել, կայ հանգուցեալի երկու ձեռագիր: Հանգուցեալի օրդու թոյլտուութեամբ գիմեցի պարոնին եւ այս անցեալ փետրուարին ստացայ: Այսպիսով ուրեմն առ այժմ հանգուցեալի ձեռագրերի թիւը քսան է:

Որ ձեռագրերի թիւն աւելի է եղել, ինչպէս ես կարծում եմ, երևում է եւ այն թուահամարներից, որ կան ձեռքիս տակ գտնուած բոլոր ձեռագրերի կազմի մէջքի

վրայ, որպէս Հ. 2 ըստ Ֆինկի ցուցակի, մէջքի վրայ
ունի 24 թիւը, ուրեմն իմ յիշողութիւնն ինձ չէ խաբել:
Արդ ուրեմն որտեղ են ըստ Ֆինկի ցուցակի Հ. 13 և
ենթադրեալ միւս 5 ձեռագրերը մնում է անյայտ:

Ձեռագրերը համարագրել եմ ըստ Ֆինկի ցուցակի,
որտեղ շատ մանրամասնութեամբ նկարագրուած են.
մնացեալներն այս են:

Հ. 16. Հաւաքածոյ. տումարական և աստղաբաշխա-
կան և Հարանց վարքից: Թուղթ է. ունի 55 թերթ:

Հ. 17. Թուղթ, թերթ 85: «Կշիռ որպիսածանոյց
ողջունագրութեան Տեառն Եփրեմայ սրբազան Արքեպիս-
կոպոսին Ռուսաստանեայցն Հայոց՝ առ Կաստանդնուպօլսոյ
Յարգելի Յօհաննէս պատրիարքն . . . Աշխատաօրեալ . . .
նուառտ Մանուէլ վարդապետէ Ալթունեանց Կիւմիւշխա-
նացոյ . . . թուին 1803 . . . սեպտեմբերի 19 . . . Սանկդ-
Պետերբուրգ»: Դաւիթ Դանիէլեան վէճերին է վերաբերում:—

Հ. 18. Թուղթ, 30 թերթ: Կոնդակներ և կոնդակ-
ների պատճէններ: Մեծ մասամբ իսկական և ներսէս Ե.
Աշտարակցու: Թերթ 29-դն է և մի ուսերէն] պարգեա-
գիր Гражданину Ованесу Андриасову Амрикову № 610:

Հ. 19. Պարսկերէն, պատմութիւն.— Թուղթ: Թերթ
283: Պատկերներ թերթ 65, 97, 143բ, 167բ, և 211բ:—

Տպագիրն է մի փոքրագիր ծոցի ժամագիրք, «Կար-
ճառօտ ժամագիրք . . . ի պէտս Հայոց վաճառականաց.
ի տպարանի Վանանդեցոյ. յամի Տեառն 1717 և Հայոց
1166. Ամստրդամ»:

Այս տպագրերը և 18 ձեռագրերը այսօր յանձնեցի
արժանապատիւ Միխիլար վարդապետին, իսկ պ. Խաչա-
տուր Քիւշիւկ-Յովհաննիսեանից ստացած երկու ձեռա-
գրերն ինձ մօտ կը մնան, մի առ ժամանակ, որոնցից օգ-
տուելուց յետոյ միայն պիտի յանձնեմ դարձեալ Մայր
Աթոռին, այդ իրաւունքն ստացել եմ հանգուցեալի որ-
դուց պ. Ռուբէն Յովհաննիսեանից:—

Սեփան Կանայեանց:

9 յունիսի 1905 ամի.

Վաղարշապատ.